Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
հոկտեմբերի 15-ի N 1159 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆԱԵՎ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի տնտեսական, այդ թվում՝ նաև փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ տնտեսական) բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման կարգը։

2. Տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման ենթակա են օրենքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության տարեկան ծրագրով նախատեսված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը (այսուհետ՝ նորմատիվ իրավական ակտի նախագիծ)։

3. Նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ ազդեցությունը գնահատող)։

4. Նորմատիվ իրավական ակտի նախագիծ մշակող մարմինը նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով նախագիծը ներկայացնում է ազդեցությունը գնահատողին։

5. Ազդեցությունը գնահատողը նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատում և դրա վերաբերյալ եզրակացություն կազմում է նորմատիվ իրավական ակտի նախագիծն ստանալու օրվանից հետո 15-օրյա ժամկետում, իսկ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի դեպքում՝ 5-օրյա ժամկետում։

6. Նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատելիս՝ ազդեցությունը գնահատողը պարզում է նորմատիվ իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում դրա կիրարկման արդյունքում կանխատեսվող հետևանքները։

7. Նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատվում է 3 փուլով՝

1) նախնական դիտարկումներ.

2) ծախսերի և օգուտների վերլուծություն.

3) կարգավորման ազդեցության գնահատման արդյունքներ։

8. Նախնական դիտարկումների ժամանակ կազմակերպվում են քննարկումներ տնտեսավարողների, այդ թվում՝ նաև փոքր և միջին ձեռնարկատերերի, ինչպես նաև ոլորտի այլ շահագրգիռ կողմերի հետ՝ հավանական ազդեցության նախնական գնահատման համար։

9. Եթե նախնական դիտարկումների արդյունքում հաստատվում է, որ տնտեսության, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության վրա զգալի ազդեցություն չի կարող լինել, ապա կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվում են, և արձանագրվում են դիտարկումների արդյունքները, մասնակցած տնտեսավարողների և փոքր ու միջին ձեռնարկատերերի թիվն ու զգալի ազդեցություն չհայտնաբերելու կապակցությամբ հիմնավորված եզրակացությունը։

10. Նորմատիվ իրավական ակտի կիրարկման հետևանքները որոշվում են «ծախսերի և օգուտների» մեթոդով (ծախսերի և օգուտների վերլուծության փուլ)։

11. Ծախսերն ու օգուտները գնահատվում են ըստ քանակական ցուցանիշների։ Անհրաժեշտ է ծախսերն ու օգուտները հնարավորության դեպքում ցույց տալ դրամական տեսքով՝ յուրաքանչյուր տարբերակի ծախսերի և օգուտների միջև համեմատություն անցկացնելու գործընթացը դյուրացնելու նպատակով։

12. Նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատելիս՝ ազդեցությունը գնահատողը հաշվի է առնում այն հանգամանքը, որ նախագիծը կարող է ազդել՝

1) տնտեսական աճի ապահովման և ներդրումների ներգրավման վրա.

2) գործարար միջավայրի բարելավման վրա (ըստ «Գործարարությամբ զբաղվելը Հայաստանում» բարեփոխումների հուշագրի հիման վրա կազմված Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի).

3) փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ինդեքսի վրա (ՄԱԿ-ի մեթոդոլոգիայով հաշվարկվող)։

13. Ազդեցությունը գնահատողը նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատելուց հետո կազմում է նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացություն և ներկայացնում նախագիծը մշակած մարմին։

14. Նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատելիս՝ ազդեցությունը գնահատողը դիմում է նախագիծը մշակած կամ այլ իրավասու մարմիններին ու կազմակերպություններին՝ նորմատիվ իրավական ակտի նախագծի տնտեսական բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման համար անհրաժեշտ լրացուցիչ հաշվարկներ և (կամ) հիմնավորումներ և (կամ) այլ տվյալներ և (կամ) տեղեկություններ ստանալու համար։

15. Նորմատիվ իրավական ակտի նախագիծը մշակած կամ այլ իրավասու մարմինը կամ կազմակերպությունը սույն կարգի 17-րդ կետով նախատեսված հաշվարկները և (կամ) հիմնավորումները և (կամ) այլ տվյալները կամ տեղեկությունները (այդպիսիք լինելու դեպքում) ներկայացնում են ազդեցությունը գնահատողին՝ դիմումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ